Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 2.

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստի

2023թ. օգոստոսի 2

Նախագահում էր Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար խորհրդի նախագահ Նարեկ Մկրտչյանը (այսուհետ՝ Նախագահ)

Մասնակցում էին՝
Խորհրդի անդամներ

Սառա Ղազարյան	«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն
Տաթևիկ Նալբանդյան	«Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարարակական կազմակերպություն
Ալլա Հարությունյան	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ
Աիդա Մուրադյան	«Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» ԲԿ հայաստանյան մասնաճյուղ

Վարդուհի Դադունց	«Մարդը կարիքի մեջ» հասարակական հիմնադրամ
Հունան Հունանյան	«Սատար» հաշմանդամների հասարարական կազմակերպություն
Նվարդ Փիլիպոսյան	«Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպություն
Մանանե Պետրոսյան	«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ
Մարուսյա Ճաղարյան	ֆիզիկական անձ
Անգին Միտիչյան	ֆիզիկական անձ (Ֆինանսների նախարարություն)
Կարեն Թովմասյան	ֆիզիկական անձ (Ֆինանսների նախարարություն)
Արմինե Բադանյան	ֆիզիկական անձ (Ֆինանսների նախարարություն)

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (այսուհետ՝ Նախարարություն) մասնակցում էին

Աննա Ժամակոչյան	նախարարի տեղակալ
Սամվել Մուրադյան	գլխավոր քարտուղար
Զարուհի Մանուչարյան	մամուլի քարտուղար

Բացակայում էին՝

Անի Գաբրիելյան	«Լուսաստղ» հասարակական կազմակերպություն
Գրիգորի Հովհաննիսյան	«Ակցիա Սովի Դեմ Հիմնադրամի» հայաստանյան մասնաճյուղ
Էդուարդ Կիրակոսյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպություն
Արևիկ Հովհաննիսյան	«Հայաստանի խուլերի միավորում» հասարակական կազմակերպություն
Դավիթ Ամիրյան	«Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպություն
Նելի Դռնոյան	«Աժդահակ» սոցիալ-բնապահպանական կենտրոն» հասարակական կազմակերպություն

Օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. **Ողջույնի խոսք. Անապահովության գնահատման նոր համակարգի հայեցակարգ**
   (Ներկայացնող՝ Նախարարի տեղակալ Ա. Ժամակոչյան)

2. **Հարց ու պատասխան. քննարկում**

   - Խորհրդի անդամներ (ՀԿ ներկայացուցիչներ, անհատներ)
   - ԱՍՀ նախարար
   - ԱՍՀ նախարարի տեղակալ- Աննա Ժամակոչյան
   - ԱՍՀՆ գլխավոր քարտուղար - Սամվել Մուրադյան
   - Մամուլի քարտուղար- Զարուհի Մանուչարյան

Մինչ Խորհրդի նիստի օրակարգին անդրադառնալը՝ Խորհրդի նախագահը ողջունեց Խորհրդի մասնակիցներին՝ ներկայացնելով անապահովության գնահատման ոլորտում ընթացիկ և նախատեսվող բարեփոխումները, դրանց նպատակները և ակնկալվող արդյունքները: Այս համատեքստում Նախագահն ընդգծեց նաև սոցիալական պաշտպանության ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ քննարկումների անհրաժեշտությունը՝ նշելով, որ նմանօրինակ հանդիպումները կարող են խթան հանդիսանալ նախատեսվող բարեփոխումների գործընթացում:

Անցնելով օրակարգի հարցին՝ նախարարի տեղակալ Ա. Ժամակոչյանը ներկայացրեց համառոտ տեղեկատվություն ընտանիքի անապահովության գնահատման նոր համակարգի /այսուհետ՝ համակարգ/ հայեցակարգի առաջնահերթությունների, նախատեսվող փոփոխությունների, դրանց իրականացման ժամկետների, ընթացակարգերի, թիրախների, հիմնական գործիքների և միջոցների, ընտանիքում ակտիվացման խթանների և այլնի վերաբերյալ: Նախարարի տեղակալը հավելեց նաև, որ յուրաքանչյուր փոփոխություն ուղղված է ծայրահեղ աղքատ ընտանիքների աղքատության շեմի հաղթահարմանը:

Այնուհետև նիստի մասնակիցները բարձրացրին մի շարք հարցեր՝ կապված նոր համակարգի ներդրման համատեքստում աշխատանքի խրախուսման, համակարգում ընդգրկված ընտանիքների կողմից անշարժ գույքի օտարման, պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման, կոմունալ և կրթական ծառայությունների (գազի, էլեկտրական էներգիայի և խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման) զեղչերի տրամադրման և այլ գործընթացների հետ:

Հնչեցված հարցերին ի պատասխան՝ նախարարի տեղակալ Աննա Ժամակոչյանը պարզաբանեց, որ ներդրվող համակարգի համատեքստում տարբեր դեպքերի առնչությամբ նախատեսվում են աջակցության մի շարք ծառայությունների փաթեթներ, օրինակ կանանց հիմնահարցերի առնչությամբ զբաղվածության ծրագրերում կանանց ներգրավածության ծրագիր:

Հատկապես խրախուսվում է աշխատանքը, քանի որ այն սոցիալապես ինքնաբավ դառնալու և անապահովության նպաստ ստանալու կարևոր նախապայման է: Նախարարի տեղակալը հավելեց նաև, որ աղքատության հաղթահարման շրջանակում հաշվի է առնվում այն հանգամանքը, որ նոր համակարգը խրախուսում է անձի զբաղվածությունը, տնտեսական

ակտիվացումը: Անդրադառնալով անշարժ գույքի օտարման հետ կապված հարցին՝ նախարարի տեղակալը նշեց, որ այդ պարագայում էլ նախատեսվում է ունենալ ծառայությունների այլ փաթեթ, որով հնարավոր կլինի ծառայություն մատուցել՝ սննդի քարտի (foodcard) տեսքով, ինչպես նաև ակտիվացման այլ ծրագրերով:

Ինչ վերաբերվում է զեղչված կոմունալ ծառայությունների տրամադրմանը՝ Ա. Ժամակոչյանը պարզաբանեց, որ կոմունալ ծառայությունների համար նախատեսված բանաձևը հաշվարկվում է միայն ամռան ամիսների համար, այսինքն ձմռան ամիսների համար աջակցություն չի նախատեսվում:

Մտահոգություն հայտնվեց նաև նպաստառու ընտանիքների կողմից որոշակի եկամուտ ստանալու պարագայում ուսումնասիրությունների ընթացքում աղքատության փաստը հաշվի առնելու, ինչպես նաև քաղաքացիների կողմից ոչ հավաստի տեղեկություններ հայտնելու հանգամանքի առնչությամբ:

Այնուհետև տեղի ունեցավ ընդհանուր քննարկում ընտանիքում 14-17 տարեկան երեխաներին աշխատաշուկայում ընդգրկելու, ընտանիքում ամուսնու կողմից արտագնա աշխատանքի մեկնելու դեպքում վերջինիս բացակայության հանգամանքը հաշվի առնելու, հոգեբանական խնդիր ուեցող անձանց ընտանեկան նպաստի նշանակման, զինվորական ծառայություն մեջ գտնվող անձանց հաշվառման, ընտանիքի կազմին (արհեստական բաժանություններ) առնչվող խնդիրների կարգավորման վերաբերյալ:

Ընտանիքում 14-17 տարեկան երեխաներին աշխատաշուկայում ընդգրկելու հարցի առնչությամբ Նախարարը նշեց, որ այդ խնդիրը կարգավորում է Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից, միաժամանակ հավելեց, որ խախտումների առնչությամբ մեծ թվով վարչական վարույթներ են հարուցվել:

Ա. Ժամակոչյանն էլ նշեց, որ վերոնշյալ տարիքի երեխաներ ունեցող ծնողները կարող են աշխատել, իսկ եթե երեխան ավելի փոքր տարիքի է, այդ դեպքում ծնողներից մեկն է աշխատում:

Իսկ աշխատանքի մեկնելու պարագայում ամուսնու բացակայության հարցը կարգավորվելու է այլ ծառայություն մատուցելու՝ այլ տիպի աջակցություն տրամադրելու միջոցով:

Ա. Ժամակոչյանը նշեց նաև, որ բանակում ծառայող անձանց բոլոր սոցիալական խնդիրները լուծում է պետությունը, այսինքն՝ տվյալ անձը գտնվում է պետության

հոգածության ներքո: Ինչը տարածվում է նաև սոցիալական պաշտպանության հաստատություններում և քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց վրա:

Մյուս հարցի՝ հոգեբանական խնդիր ուեցող անձին ընտանեկան նպաստի նշանակման առնչությամբ իրականացվելու են տնայցեր, իսկ դիմումները ընդունելու են օպերատորները, որոնց համար սահմանվելու են համապատասխան չափորոշիչներ:

Իսկ արհեստական բաժանությունները կանխարգելելու համար հաշվի է առնվում միջազգային փորձը, այն է, որ տարբեր երկրներում խրախուսվում է մեծ ընտանքի կազմը, այսինքն՝ առաջնահերթ արտոնություն տրամադրվում է մեծ թվով անդամներ ունեցող ընտանիքներին, ինչպիսիք են՝ կոմունալ զեղչերից օգտվելը, հարկերը պակաս վճարելը և այլն: ՀՀ-ում նույնպես նախատեսվում է արտոնություններ տրամադրել նմանատիպ ընտանիքներին, այսինքն՝ պետական քաղաքականությամբ խրախուսվելու են նմանատիպ ընտանքիները:

Բարձրացված հարցին՝ թե արդյոք նախատեսվում է լրատվամիջոցների միջոցով ընտանիքի անապահովության գնահատման նոր համակարգի հայեցակարգի ներդրման վերաբերյալ ավելի լայն հասարակության շրջանում հանրային արշավ նախատեսելու, մամուլի քարտուղար Զարուհի Մանուչարյանը պարզաբանեց, որ իրազեկման համար նախատեսված է մի քանի փուլ, առաջնահերթ նախատեսվում է մատչելի ձևով նախատեսվող փոփոխությունների մասին իրազեկել ներքին լսարանին, դրանից հետո՝ մինչև տարեվերջ այդ գործընթացն իրականացնել քաղաքացիների լայն շրջանակի համար:

Ա. Ժամակոչյանը նշեց, որ ընտանիքի անապահովության գնահատման միավորի ձևավորման համար նախատեսվում է ընտանիքի եկամուտների վերաբերյալ ստանալ հավաստի և ամբողջական տվյալներ:

Նախարարի տեղակալը կարևորեց նաև համակարգում հաշվառված ընտանիքների անդամների մասնագիտական կարողությունների զարգացմանն ու կայուն զբաղվածության ապահովմանն ուղղված արդյունավետ ծրագրերի դերը:

«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի ներկայացուցիչը մտահոգություն հայտնեց համայնքներում առկա մարդկային ռեսուրսների միջոցով համակարգում նախատեսվող փոփոխությունները կիրառելի դարձնելու առնչությամբ:

Ա. Ժամակոչյանը պարզաբանեց, որ համակարգի ներդրման հետ կապված գրեթե բոլոր համայնքներում նախատեսվում են կազմակերպել առանձին այցելություններ:

Նիստի ավարտին Նախագահը շնորհակալություն հայտնեց հասարակական խորհրդի անդամներին ներկայության և ակտիվ մասնակցության համար՝ նշելով, որ վերջիններիս կողմից ներկայացված առաջարկներն ու դիտարկումները հնարավորություն կտան նախատեսվող բարեփոխումները դարձնել առավել կառուցողական և արդյունավետ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

Արձանագրությունը կազմեց՝ Ա. Խաչատրյանը